Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 27-06-2022 թ. որոշմամբ
««ԱԶՆԱՎՈՒՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԱԶՆԱՎՈՒՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ 6
1.3 Պետական գրանցման համարը		222.160.924722
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2016-08-16
1.5 ՀՎՀՀ-ն		02652202
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)93838291
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		https://aznavourfoundation.org/
1.8 Էլեկտրոնային փոստը		a.baghdasaryan@philin.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Կրիստինա Սարկիսյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	7	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Բարեգործական, մշակութային, կրթական և սոցիալական ծրագրեր	105,322,004
	ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-ի վերանորոգում, վերազինում	118,414,070
	Տոկոսային եկամուտ	271,875,003
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		

Digitally signed by

	Բարեգործական, մշակութային, կրթական և սոցիալական ծրագրեր	18,707,655
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
	Մարզասարք	25,150,675
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Գրենական պարագաներ	13,120,822
	Վերականգնողական Սարքեր	66,310,520
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Կրթամշակութային	118,245,672	
Աջակցություն սոցիալապես առավել խոցելի հատվածին	185,459,230	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	303,704,902	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	303,704,902	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 34 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ազնավուր» հիմնադրամ

31 դեկտեմբերի 2021թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Ազնավուր» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ազնավուր» հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համադրելի ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որն իր աուդիտորական հաշվետվությունում՝ թվագրված 2021թ. նոյեմբերի 4-ին, արտահայտել է չձևափոխված կարծիք՝ այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 21-ում, Հիմնադրամը վերաներկայացրել է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև 2020թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդները: Մենք աուդիտի ենք ենթարկել նաև այդ վերաներկայացումները:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

16 հունիսի 2022թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	2020թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկայացված)
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	4	1,386,276	1,344,115	1,247,912
		1,386,276	1,344,115	1,247,912
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ		2,656	1,222	1,118
Կանխավճարներ և այլ ակտիվներ	6	67,128	57,692	58,167
Ժամկետային ավանդներ	5	3,141,508	3,308,716	3,194,990
Մնացորդներ բանկերում	7	335,287	93,520	46,629
		3,546,579	3,461,150	3,300,904
Ընդամենը ակտիվներ		4,932,855	4,805,265	4,548,816
Պարտավորություններ և պահուստներ				
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8	1,369,367	1,330,820	1,238,233
Հատուկ նպատակային միջոցների երկարաժամկետ մասը	9	2,747,880	2,747,880	2,747,880
		4,117,247	4,078,700	3,986,113
Ընթացիկ պարտավորություններ				
Հատուկ նպատակային միջոցների կարճաժամկետ մասը	9	157,987	240,782	351,566
Կրեդիտորական պարտքեր	10	9,583	6,535	1,246
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ		48,341	47,160	45,270
		215,911	294,477	398,082
Զուտ ակտիվներ				
Կուտակված արդյունք		599,697	432,088	164,621
		599,697	432,088	164,621
Ընդամենը պարտավորություններ և պահուստներ		4,932,855	4,805,265	4,548,816

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2022թ. հունիսի 16-ին:

Կրիստինա Սարկիսյան — Գործադիր տնօրեն

Արմինե Սահակյան — Հաշվապահական ընկերության ներկայացուցիչ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)
Նվիրատվությունից եկամուտ	11	312,454	228,856
Այլ եկամուտ		1,200	-
Մաշվածություն և ամորտիզացիա		(28,012)	(25,738)
Անձնակազմի ծախսեր		(60,129)	(48,348)
Տրված նվիրատվություններ	12	(149,858)	(117,828)
Ներկայացուցչական և գործուղման ծախսեր		(7,466)	(2,215)
Ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային վնասներ		(1,340)	(758)
Այլ ծախսեր	13	(64,573)	(31,111)
Գործառնական գործունեությունից արդյունք		2,276	2,858
Ֆինանսական եկամուտ	5	269,237	264,418
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/(վնաս)		(55,225)	47,786
Զուտ ֆինանսական եկամուտ		214,012	312,204
Արդյունք մինչև հարկերը		216,288	315,062
Շահութահարկի գծով ծախս		(48,679)	(47,595)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		167,609	267,467

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2020թ. հունվարի 1-ի դրությամբ նախքան վերաներկայացումը	172,196	172,196
Վերաներկայացում (տե՛ս ծանոթագրություն 21)	(7,575)	(7,575)
2020թ. հունվարի 1-ի դրությամբ վերաներկայացումից հետո	164,621	164,621
Տարվա արդյունք	267,467	267,467
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	432,088	432,088
Տարվա արդյունք	167,609	167,609
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	599,697	599,697

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Նվիրատվություններից մուտքեր	242,444	115,928
Վճարումներ մատակարարներին	(134,094)	(18,736)
Վճարումներ աշխատակիցներին	(58,339)	(45,497)
Վճարներ ստացված նվիրատվությունների համար	(69,296)	(110,696)
Այլ դրամական վճարներ	(3,735)	(2,334)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(23,020)	(61,335)
Վճարված շահութահարկ	(47,500)	(45,705)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(70,520)	(107,040)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր մարված ավանդներից	3,738,181	4,423,082
Ավանդների ներդրում	(3,339,081)	(4,253,129)
Ստացված տոկոսային եկամուտ	6,214	22,094
Հիմնական միջոցների ձեռքբերում	(70,173)	(58,903)
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	335,141	133,144
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	264,621	26,104
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(22,854)	20,787
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	93,520	46,629
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	335,287	93,520

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Ազնավուր» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») նպատակն է շարունակել Շառլ Ազնավուրի բարեգործական գործունեությունը: Հիմնադրամի առաքելությունն է աջակցել Հայաստանում բարեգործական, մշակութային, կրթական և սոցիալական ծրագրերին, իրականացնել և համակարգել մարդասիրական նախագծեր երիտասարդների համար, աջակցել «Շառլ Ազնավուրի կացարանի» հիմնմանը և ղեկավարմանը՝ մշակութային և կրթական կյանքի զարգացման վայրի ստեղծման նպատակով:

Հիմնադրամը հիմնադրվել է 2016թ. օգոստոսի 16-ին՝ որպես ոչ առևտրային կազմակերպություն Շառլ Ազնավուրի և նրա որդու՝ Նիկոլա Ազնավուրի կողմից՝ իրենց բարեգործական գործունեություններին հետամուտ լինելու նպատակով:

Հիմնադրամի աշխատանքների կառավարումն իրականացվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից՝ Նիկոլա Ազնավուրի նախագահությամբ: Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի այլ անդամներն են Գևորգ Սարկիսյանը, Ռուբեն Արությունյանը, Ռուբեն Վարդանյանը և Վահե Գաբրաչեն: Հոգաբարձուների խորհուրդը և Հիմնադիրներն ընդունում են նվիրատվությունների, ընթացիկ գործառնական և ծրագրային ծախսերի մասով գլխավոր որոշումները:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2021թ. կազմել է 7 մարդ (2020թ.՝ 7 մարդ):

Հիմնադրամի իրավաբանական գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Բաղրամյան պողոտա 6, 0019:

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Հիմնադրամը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյուքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 15-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2021թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2021թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2021թ□, որևէ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
Տարբեր	*Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2) (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4, ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՖՀՄՍ 16	*COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ 2021թ. հունիսի 30-ից հետո*	*1 ապրիլի 2021թ.*
ՖՀՄՍ 3	*Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՀՀՄՍ 3 փոփոխություններ)*	*1 հունվարի 2022թ.*
ՀՀՄՍ 16	*Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*	*1 հունվարի 2022թ.*

ՀՀՄՍ 37	*Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)*	*1 հունվարի 2022թ.*
ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16	*2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ)*	*1 հունվարի 2022թ.*
ՖՀՄՍ 17	*Ապահովագրության պայմանագրեր*	*1 հունվարի 2023թ.*
ՖՀՄՍ 4	*ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարացում (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՖՀՄՍ 17	*ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – համադրելի տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 12	*Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*

2.6 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Հիմնադրամը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և իրականացնում է նախորդ տարիների սխալների ուղղումը հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո թողարկման համար հայտարարված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում՝ վերահաշվարկելով ներկայացված նախորդող ժամանակաշրջանների համեմատելի այն գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ եթե սխալը տեղի է ունեցել նախքան ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանը, այդ դեպքում՝ վերահաշվարկելով ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանի համար ակտիվների, պարտավորությունների և զուտ ակտիվների սկզբնական մնացորդները: Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2021թ. դեկտեմբերի 31-

ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 480.14 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 542.61 ՀՀ դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 522.59 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 641.11 ՀՀ դրամ)։ Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

3.2 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը/ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են տարվա արդյունքում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը/ամորտիզացիան ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության/ամորտիզացիայի հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-	50 տարի
Արտադրատնտեսական գույք	-	5-8 տարի
Ոչ նյութական ակտիվներ	-	10-20 տարի

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

3.3 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.4 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.5 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են տարվա արդյունքում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 16.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Հիմնադրամի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են մնացորդներ բանկերում և ժամկետային ավանդներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Հիմնադրամի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Հիմնադրամը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 16.2-ում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.6 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Հիմնադրամը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.7 Զուտ ակտիվներ

Հիմնադրամի զուտ ակտիվները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հիմնականում ներառում են կուտակված հավելուրդ կամ պակասորդ/դեֆիցիտ/ գործառնական գործունեությունից: Հիմնադրամի զուտ ակտիվները չեն կարող բաշխվել նրա հիմնադիրներին ոչ բնականոն գործունեության ընթացքում, ոչ էլ լուծարման ժամանակ:

3.8 Պետական շնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Հատուկ նպատակային միջոցները ստացվում են հատուկ նպատակների համար և նախատեսված չեն Հիմնադրամի կողմից այլ նպատակներով օգտագործման համար: Այս միջոցները նախապես ներառվում են որպես հատուկ նպատակային միջոցներ և ճանաչվում են որպես նվիրատվությունից եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում Հիմնադրամի պարտավորությունների կատարմանը զուգընթաց՝ սահմանված հատուկ նպատակային միջոցների նվիրատվության պայմանագրերով: Որպես կանոն, այսպիսի նվիրատվություններից ստացված եկամուտը ճանաչվում է այդ պարտավորությունների կատարման մասով ծախսերի հետ միասին:

3.9 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

3.10 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Հող	Անավարտ շենքեր և շինություններ	Արտադրա-տնտեսական գույք	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	180,800	1,121,062	3,620	1,740	1,307,222
Ավելացում	-	58,642	361	63,038	121,941
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	180,800	1,179,604	3,981	64,778	1,429,163
Ավելացում	-	64,328	3,877	1,968	70,173
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	180,800	1,243,932	7,858	66,746	1,499,336
Կուտակված մաշվածություն/ ամորտիզացիա և արժեզրկում					
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	-	58,421	662	227	59,310
Տարվա հաշվարկ	-	21,845	580	3,313	25,738
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	80,266	1,242	3,540	85,048
Տարվա հաշվարկ	-	21,860	1,626	4,526	28,012
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	102,126	2,868	8,066	113,060
Հաշվեկշռային արժեք					
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	180,800	1,099,338	2,739	61,238	1,344,115
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	180,800	1,141,806	4,990	58,680	1,386,276

2017թ. ապրիլ ամսին Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հիմնադրամին է տրամադրել շենք և հող (Հայաստան, ք. Երևան, Անտառային փողոց 11/4)՝ Շառլ Ազնավուրի թանգարանի հիմնման նպատակով: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տրամադրված հողը և շինությունը, ինչպես նաև համապատասխան պետական շնորհները, ճանաչվել են ճանաչման պահին գնահատված իրական արժեքով, որը կազմել է 1,273,060 հազար դրամ: Հիմնադրամն ունի հողի և շենքի սեփականության իրավունք, որը տրամադրվել է բացառապես Շառլ Ազնավուրի թանգարանի և Մշակութային կենտրոնի հիմնման նպատակով: Հայաստանի Հանրապետության կադաստրային կոմիտեի կողմից 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կադաստրային արժեքը հողի համար գնահատվել է՝ 214,500 հազար դրամ, իսկ շենքի համար՝ 390,576 հազար դրամ:

Հաշվետու տարիների ընթացքում Հիմնադրամն իրականացրել է իր հողի և շենքի վերանայում և գնահատել է, որ հաշվետու տարիներին շենքի շուկայական գինն էականորեն չի փոխվել և դրա արժեզրկման որևէ ցուցանիշ առկա չէ:

Հիմնադրամը նախատեսում է հիմնովին վերանորոգել շենքը՝ ապամոնտաժելով հին շենքը և կառուցել նորը, ինչը կհանգեցնի ապամոնտաժման ժամանակ գործող շենքի հաշվեկշռային արժեքի ապաճանաչմանը:

5 Ժամկետային ավանդներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ժամկետային ավանդ	3,151,181	3,317,049
Ակնկալվող պարտքային կորուստներ	(9,673)	(8,333)
	3,141,508	3,308,716

Ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի վերջնական մնացորդը համադրվում է տարեսկզբի մնացորդի հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Կորուստների գծով պահուստը հունվարի 1-ի դրությամբ	8,333	7,575
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	1,340	758
Կորուստների գծով պահուստը դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,673	8,333

17 (բ) ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները: Արժեզրկման պահուստի ընթացիկ և համադրելի գումարները հաշվարկելիս կիրառվել է ՖՀՄՍ 9-ի՝ ակնկալվող կորուստների մոդելը:

Ժամկետային ավանդները «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում պահվող կարճաժամկետ ավանդներն են, որոնք 2021թ. և 2020թ. ֆինանսական տարիների համար ունեն 1.4% տոկոսադրույք՝ եվրոյով ավանդների համար և 8.00%-9.05% տոկոսադրույք՝ ՀՀ դրամով ավանդների համար:

Հաշվետու տարվա ընթացքում ժամկետային ավանդներից ստացված տոկոսային եկամուտը կազմել է 269,237 հազար դրամ (2020 թ.՝ 264,418 հազար դրամ), որը ներառված է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության ֆինանսական եկամուտ տողում:

6 Կանխավճարներ և այլ ակտիվներ

Հազար դրամ

	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Ֆինանսական ակտիվներ		
Ստացվելիք տոկոսներ	4,718	7,364
	4,718	7,364
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Կայքի ծառայությունների համար կանխավճարներ	19,296	25,554
Կանխավճարներ վերականգնման պլանավորման ծառայությունների համար	43,114	21,980
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	-	2,794
	62,410	50,328
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	67,128	57,692

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

7 Մնացորդներ բանկերում

Հազար դրամ

	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Բանկային հաշիվներ	335,287	93,520
	335,287	93,520

Տե՛ս ծանոթագրություն 17 (ա)՝ դրամարկղում մնացորդների արժույթների բացահայտման համար:

8 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ

	2021թ.	2020թ. (վերաներկայացված)
Մնացորդ հունվարի 1-ի դրությամբ	1,330,820	1,238,233
Հատուկ նպատակային միջոցներից փոխանցում (տե՛ս ծանոթագրություն 9)	70,175	121,941
Ճանաչված եկամուտ (տե՛ս ծանոթագրություն 11)	(31,628)	(29,354)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,369,367	1,330,820

Ակտիվներին վերաբերող շնորհները ներառում են ՀՀ կառավարության կողմից տրամադրված հողը և շենքը, որոնք ճանաչվում են որպես նվիրատվությունից եկամուտ՝

համապատասխան ակտիվների օգտագործմանը և մաշվածությանը զուգընթաց: Հողի օգտագործումը ճանաչվում է՝ ելնելով տվյալ հողամասի վրա կառուցված շենքի օգտակար ծառայության ժամկետից: Հաշվետու տարվա ընթացքում հողի մասով ճանաչված նվիրատվությունից եկամուտը՝ 3,616 հազար դրամ (2020թ.՝ 3,616 հազար դրամ), ճանաչվել է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

9 Հատուկ նպատակային միջոցներ

Հազար դրամ	2021թ.	2020թ. (վերաներկայացված)
Մնացորդ հունվարի 1-ի դրությամբ	2,988,662	3,099,446
Ստացված նվիրատվություններ (տե՛ս ստորև)	268,206	210,659
Ակտիվներին վերաբերող շնորհներին փոխանցում (տե՛ս ծանոթագրություն 8)	(70,175)	(121,941)
Ճանաչված եկամուտ (տե՛ս ծանոթագրություն 11)	(280,826)	(199,502)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,905,867	2,988,662

Հաշվետու տարիների ընթացքում ստացված նվիրատվությունները ներառում են՝

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտերկրի պետական ֆինանսների մասնագիտացված վարչություն	118,414
SOS Արեւելյան քրիստոնյաներ	39,910
JHM Բարեգործական հիմնադրամ	24,515
Հայ օգնության ֆոնդ	14,894
(Ֆրանսիայի Հայ Բժշկական Միություն) Լիոն Ռոն-Ալպ	13,649
Հայկական մշակույթի տուն	11,794
Նիկոլա Ազնավուր	11,502
Միացյալ հրեական սոցիալական հիմնադրամ (FSJU)	7,317
«Ավրորա» բարեգործական հիմնադրամ	6,055
Մալխասյան Դավիթ	5,000
Էլիզ Քեյր ՀԿ	4,399
Կայքի միջոցով ստացված նվիրատվություններ	3,673
Երևանի կոնյակի գործարան ՓԲԸ	3,000
Կուրեղյան Կարեն	2,206
Այլ	1,878
	268,206

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ջալիս ընկերություն	93,872
Կայքի միջոցով ստացված նվիրատվություններ	25,053
Ուլլա Ազնավուր	24,417
Յունիվերսալ Մյուզիք Ֆրանս	11,640
Իդեա Եվրոպա	9,988
«Ամերիաբանկ» ՓԲԸ	7,000
Կայզերլիան	6,583
Գասպարյան Արմեն	6,250
Գրիգոր Նարեկացու Ասոցիացիա	5,891
Հայաստան Հիմնադրամ C/O	5,016
Թագ Հոլդինգ ՍՊԸ	4,879
Ռեդ ընդ Ուայթ Ինթերնեյշընլ ՓԲԸ	2,508
Փիլիպոսյան Փիլոսյան Հիմնադրամ	2,466
Այլ	5,096
	210,659

10 Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերման գծով կրեդիտորական պարտքեր	726	292
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	5,931	3,961
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	2,926	2,282
	9,583	6,535

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Հիմնադրամի արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 17 (ա)-ում:

11 Նվիրատվությունից եկամուտ

Հազար դրամ

	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)
Հատուկ նպատակային միջոցներից եկամուտ (տե՛ս ծանոթագրություն 9)	280,826	199,502
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ (տե՛ս ծանոթագրություն 8)	31,628	29,354
	312,454	228,856

12 Տրված նվիրատվություններ

Հազար դրամ

	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	65,903	-
Աջակցություն վիրավոր զինվորներին	51,180	-
Արցախի Մարտունու շրջանի կրթության և սպորտի վարչություն	10,922	-
Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն ՊՈԱԿ	9,093	-
Վիվա Հիմնադրամ	-	24,680
Հայաստան համահայկական հիմնադրամ	-	24,548
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	-	15,478
Անհատներին տրված նվիրատվություններ և ֆինանսական օգնություն	7,721	52,509
Այլ	5,039	613
	149,858	117,828

13 Այլ ծախսեր

Հազար դրամ

	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)
Մասնագիտական ծախսեր	8,520	9,687
Գովազդային ծախսեր	13,626	7,189
Տրանսպորտի և աշխատուժի ծախսեր	15,406	-
Միջոցառումների կազմակերպում	2,459	4,055
Հնացած պաշարների դուրսգրում	12,661	-
Դեբիտորական պարտքերի դուրսգրում	2,794	-
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	3,252	1,362
Անվտանգություն	1,080	1,080
Երկրաբանական և տեխնիկական ծառայություններ	-	4,723
Հիմնական միջոցներ և հողի հարկեր	471	571
Այլ	4,304	2,444
	64,573	31,111

14 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման: Բիզնեսի վրա հիմնական ազդեցություններից մի քանիսը կարող են ներառել առևտրի սահմանափակումը, ֆինանսավորում ստանալու անկարողությունը և այլն: Սակայն ղեկավարության գնահատմամբ այն նշանակալի ազդեցություն չի ունենա Հիմնադրամի գործունեության և ֆինանսական հաշվետվությունների վրա:

15 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

15.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն

գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Նվիրատվություններին հասանելիություն

Հիմնադրամի կողմից իր ծրագրերի ֆինանսավորումը և Ազնավուր կենտրոնի ստեղծումը մեծապես պայմանավորված է տվյալ տարում նվիրատվություններից ստացված եկամտից: Ղեկավարության կարծիքով, Հիմնադրամը մինչ օրս հնարավորություն է ունեցել համալրել բավարար միջոցներ և չի ակնկալում այդ նվիրատվությունների էական նվազում կամ կրճատում տեսանելի ապագայում: Ղեկավարության կողմից չեն հայտնաբերվել էական անորոշություններ՝ կապված այնպիսի դեպքերի կամ պայմանների հետ, որոնք էական կասկած կհարուցեին Հիմնադրամի գործունեության շարունակականության ապահովման վերաբերյալ:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Հիմնադրամի հողը և շենքը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվել են իրական արժեքով՝ որպես հաշվառված արժեք 2017թ. նվիրատվության ստացման ամսաթվին: Այդ ժամանակից ի վեր անկախ փորձագետի կողմից այդ ակտիվների գնահատում չի իրականացվել: Ղեկավարությունն իրականացնում է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների տարեկան արժեզրկման հայտանիշի ստուգում և գնահատել է, որ, քանի որ, Հայաստանում գույքի շուկայական գները աճել են 2017թ.-ից ի վեր, արժեզրկման որևէ հայտանիշ առկա չէ:

16 Ֆինանսական գործիքներ

16.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.5-ում:

16.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Ստացվելիք տոկոսներ	4,718	7,364
Ժամկետային ավանդներ	3,141,508	3,308,716
Մնացորդներ բանկերում	335,287	93,520
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	3,481,513	3,409,600

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր	6,657	4,253
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	6,657	4,253

17 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հոգաբարձուների խորհուրդը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի ռիսկերի կառավարման համակարգի ստեղծման և վերահսկողության համար: Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականությունների մշակման և վերահսկման համար: Ղեկավարությունը կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներկայացնում Հոգաբարձուների խորհրդին կատարած աշխատանքի վերաբերյալ:

Հիմնադրամի ռիսկի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Հիմնադրամը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունն ու ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Հիմնադրամի գործունեությունը արտացոլելու նպատակով: Ուսումնական ծրագրերի, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Հիմնադրամը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ կպատկերացնեն իրենց դերերը և պարտականությունները: Հիմնադրամը կառավարում է իր ծախսումները և զուտ ակտիվները՝ իր գործունեության շարունակականության կարողությունն ապահովելու և միևնույն ժամանակ՝ իրագործելով իր նպատակները ծախսերի օպտիմալացման միջոցով: Հիմնադրամի կողմից իր ռիսկերի չափման եղանակներում փոփոխություններ տեղի չեն ունեցել, ինչպես նաև չեն փոփոխվել ռիսկերի ենթարկվածությունը կամ դրանց կառավարման և չափման մեթոդները:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի և տոկոսադրույքային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է

Հիմնադրամի՝ նվիրատվություններից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով: Բացի այդ Հիմնադրամն ունի եվրոյով վարկ:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Եվրո	ԱՄՆ դոլար
Ֆինանսական ակտիվներ		
Ժամկետային ավանդներ	180,744	-
Ստացվելիք տոկոսներ	159	-
Մնացորդներ բանկերում	206,130	32,156
	387,130	32,156
Ֆինանսական պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր	76	-
	76	-
Զուտ արդյունք	387,054	32,156

Հոդված

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Եվրո	ԱՄՆ դոլար
Ֆինանսական ակտիվներ		
Ժամկետային ավանդներ	193,825	-
Ստացվելիք տոկոսներ	60	-
Մնացորդներ բանկերում	98,446	1,242
	292,351	1,242
Զուտ արդյունք	292,351	1,242

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2020թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2020թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2020թ.՝ 10%):

Դրամի արժեզրկումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2020թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	Եվրոյի ազդեցություն		ԱՄՆ դոլարի ազդեցություն	
	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.
Տարվա արդյունք	38,696	3,216	20,373	124
	38,696	3,216	20,373	124

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված

վերլուծությունը կարելի է համարել Հիմնադրամի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդները և ժամկետային ավանդները:

Պարտքային ռիսկը կառավարվում է՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է դրանք բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Բոլոր ավանդները գտնվում են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում, որի վարկային ռեյտինգը Ba է ըստ Մուդիզի: Դրամական միջոցների մնացորդները գտնվում են Ամերիաբանկ ՓԲԸ-ում և Շվեյցարական Համադաշնության տեղական բանկերից մեկում, որի վարկային ռեյտինգը A է ըստ Ֆիտչի:

18 Իրական արժեքի չափում

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

18.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

ՖՀՄՍ-ն սահմանում է իրական արժեքը որպես գին, որը կստացվեր ակտիվը վաճառելիս կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի ընթացքում: Այստեղ ներկայացված գնահատումները կարող են բնութագրական չլինել Հիմնադրամի կողմից որոշակի գործիքի ամբողջական տնօրինումը շուկայում փոխարկման արդյունքում իրացնելիս Հիմնադրամի կողմից ստացվելիք գումարների առումով:

Այնուամենայնիվ, գնահատված իրական արժեքը որոշելու համար անհրաժեշտ է կիրառել դատողություն: Հայաստանի Հանրապետությունը շարունակում է կրել զարգացող շուկայի որոշ բնութագրեր և տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկայում գործառնությունների ծավալները: Շուկայական գնանշումները կարող են արդիական չլինել կամ արտացոլել արտասովոր իրացման գործարքներ, հետևաբար՝ չներկայացնել ֆինանսական գործիքների իրական արժեքները:

Ղեկավարությունն օգտագործել է շուկայում առկա ողջ հասանելի տեղեկատվությունը՝ ֆինանսական ակտիվների իրական արժեքները գնահատելու համար:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կարճաժամկետ բնույթից ելնելով՝ ղեկավարությունը կարծում է, որ դրանց հաշվեկշռային արժեքը մոտավորապես համապատասխանում է դրանց իրական արժեքին:

19 Պայմանականություններ

19.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

19.2 Իրավական գործընթացներ և դատական վարույթներ

Հիմնադրամը չի ունեցել այնպիսի իրավական խնդիրներ, որոնք կարող են զգալի ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական վիճակի վրա: Հիմնադրամը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներգրավված չի եղել նշանակալի դատական վարույթներում: Ֆինանսական հաշվետվություններում այդ գծով պահուստ չի ստեղծվել:

20 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերն են՝ Հոգաբարձուների խորհրդի անդամները, գործընկեր կազմակերպությունները, ինչպես նաև ղեկավարության ներկայացուցիչները: Հիմնադրամի կառավարումը վերահսկվում է 5 հոգաբարձուների կողմից՝ պրն. Նիկոլա Ազնավուրի նախագահությամբ: Հոգաբարձուների նախագահը կամ հոգաբարձուները Հիմնադրամից վարձատրություն չեն ստացել:

20.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ Գործարքներ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ստացված նվիրատվություններ	11,502	-
Տոկոսային եկամուտ	269,237	264,418
Ժամկետային ավանդներ	3,339,081	4,260,493
Ժամկետային ավանդների մարում	3,738,181	4,423,082

Հազար դրամ Մնացորդներ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ժամկետային ավանդներ	3,141,508	3,308,716
Մնացորդներ բանկերում	278,409	41,625

20.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	28,942	24,899
	28,942	24,899

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդներ առկա չեն:

21 Համադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Հաշվետու տարում Հիմնադրամը վերանայել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ներկայացման ձևը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ինչի արդյունքում համադրելի ֆինանսական հաշվետվություններում որոշ հոդվածներ է վերադասակարգել:

«Ակտիվներին վերաբերող պետական շնորհներ» և «Ակտիվների վերաբերող հատուկ նպատակային միջոցներ» տողերն այժմ միացվել են և ներկայացվում են որպես «Ակտիվներին վերաբերող շնորհներ»:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ոչ ընթացիկ պարտավորությունների «Հատուկ նպատակային միջոցներ» տողն այժմ բաժանված է ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի. ընթացիկ պարտավորություններում ներկայացված է որպես «Հատուկ նպատակային միջոցների կարճաժամկետ մաս» և ոչ ընթացիկ պարտավորություններում որպես «Հատուկ նպատակային միջոցների երկարաժամկետ մաս»:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեգրված և չվճարված տոկոսային եկամուտը վերադասակարգվել է «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ» տողից «Կանխավճարներ և այլ ակտիվներ» տողում և բացահայտվել է ծանոթագրություն 6-ում որպես ստացվելիք տոկոսներ: Այս վերադասակարգումների արդյունքում փոփոխվել է նաև 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, քանի որ մարման ժամկետով ավանդներից մուտքերն աճել են 20,019 հազար դրամով, ժամկետային ավանդներից ստացված տոկոսային եկամուտն աճել է 22,094 հազար դրամով, դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա փոխարժեքային տարբերության ազդեցությունը նվազել է 27,036 հազար դրամով, իսկ դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի և տարեվերջի դրությամբ նվազել են համապատասխանաբար 22,441 հազար դրամով և 7,364 հազար դրամով:

Ժամկետային ավանդների գծով ակնկալվող պարտքային կորուստները, որոնք նախկինում դիտարկվել են որպես դրամաշնորհային ծախսերի մաս, այժմ վերագրվում են կուտակված արդյունքին: Արդյունքում, հատուկ նպատակային միջոցների տարեվերջի մնացորդները նույնպես փոփոխվել են:

Վերադասակարգումները ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31 (նախքան վերաներկայացումը)	Վերաներկայացում	2020թ. դեկտեմբերի 31 (վերաներկայացումից հետո)
Պաշարներ	1,377	(155)	1,222
Կանխավճարներ և այլ ակտիվներ	50,328	7,364	57,692
Մնացորդներ բանկերում	100,884	(7,364)	93,520
Հատուկ նպատակային միջոցներ	2,980,484	(2,980,484)	-
Հատուկ նպատակային միջոցների երկարաժամկետ մասը	-	2,747,880	2,747,880
Հատուկ նպատակային միջոցների կարճաժամկետ մասը	-	240,782	240,782
Կուտակված արդյունք	440,421	(8,333)	432,088
Նվիրատվությունից եկամուտ	229,459	(603)	228,856
Այլ ծախսեր	(30,956)	(155)	(31,111)

Հազար դրամ	2020թ. հունվարի 1 (նախքան վերաներկայացումը)	Վերաներկայացում	2020թ. հունվարի 1 (վերաներկայացումից հետո)
Մնացորդներ բանկերում	69,070	(22,441)	46,629
Կանխավճարներ և այլ ակտիվներ	35,726	22,441	58,167
Հատուկ նպատակային միջոցներ	3,091,871	(3,091,871)	-
Հատուկ նպատակային միջոցների երկարաժամկետ մասը	-	2,747,880	2,747,880
Հատուկ նպատակային միջոցների կարճաժամկետ մասը	-	351,566	351,566
Կուտակված արդյունք	172,196	(7,575)	164,621

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 09.08.2022 16:30